NCDC

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՊՐԻԼ 2019 թ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019Թ. ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. ապրիլ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում I խմբի միկրոօրգանիզմներով հարուցված, հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող հիվանդություններ, դեպքեր չեն արձանագրվել:

Հատուկ վտանգավոր վարակներ

Բրուցելոզ

2019թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 30 դեպք, որից 2-ը՝ Երևան քաղաքում, 8-ը՝ Արագածոտնի մարզում, 6-ը՝ Արմավիրի մարզում, 6-ը՝ Սյունիքի, 3-ը՝ Գեղարքունիքի մարզում, 2-ը՝ Վայոց Ձորի, 1-ը՝ Կոտայքի, 1-ը՝ Արարատի, 1-ը՝ Շիրակի մարզերում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում 2018-2019 թթ հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված բրուցելոզի դեպքերը

Ըստ գծապատկեր 1-ի՝ հանրապետությունում 2019թ. ապրիլին արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերը նախորդ ամսվա համեմատ աճել են 2.1 անգամ, իսկ 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.6 անգամ:

Օդակաթիլային վարակներ

Գրիպ և Սուր շնչառական վարակ

2019թ. ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետության տարածքում շարունակվում է գրանցվել սուր շնչառական վարակներով՝ (այսուհետ ՍՇՎ), պայմանավորված հիվանդացության ցածր ակտիվություն: ՍՇՎ դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 1.5 անգամ: Ընդհանուր ՍՇՎ ախտորոշվածների 4,6%-ը հոսպիտալացվել են Հանրապետության տարբեր բժշկական կենտրոններ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 0-4 տարեկանների շրջանում: 2019թ. ապրիլ ամսվա ընդհանուր ցուցանիշը 2018թ. և 2017թ նույն ժամանակահատվածի համեմատ նվազել՝ 1 անգամ:



Գծապատկեր 2.2018-2019 թթ. հոկտեմբեր – ապրիլ ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների հիվանդացության ցուցանիշն ըստ 100.000 բնակչի

Ապրիլ ամսվա ընթացքում, գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 100 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է գրիպի Ա տեսակի H1N1 ենթատեսակի 7 դեպք, H3 ենթատեսակի 8 դեպք, ռեսպիրատոր սինցիտիալ և ադենո վիրուսներով հարուցված վարակի՝ 2 դեպք, ռինովիրուսով հարուցված վարակի՝ 1 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է գրիպ Բ տեսակի՝ 3 դեպք, գրիպի Ա տեսակի H1N1 ենթասեսակի՝ 36 դեպք:

Այլ օդակաթիլային վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)

Ջրծաղիկ

2019թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել է ջրծաղիկի 1554 դեպք, նախորդ տարի՝ 1693 դեպք:



Գծապատկեր 3. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված ջրծաղկի դեպքերը

Ըստ գծապատկեր 3-ի՝ 2019թ. ապրիլին արձանագրված ջրծաղկի դեպքերը նախորդ ամսվա համեմատ աճել են 1.3 անգամ, իսկ 2018թ նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 1 անգամ: Ընդհանուր առմամբ դեպքերի 88,8% արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում: Դեպքերի 81.0% արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Նշված ժամանակահատվածում հղիների շրջանում արձանագրվել է ջրծաղկի 3 դեպք, որի մասին տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն:

Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորության սահմաններում առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

Քութեշ

2019թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել է քութեշի 202 դեպք, նախորդ տարի՝ 108 դեպք:



Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ. հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված քութեշի դեպքերը

Ըստ գծապատկեր 4-ի՝ արձանագրված քութեշի դեպքերը նախորդ ամսվա և 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են համապատասխանաբար 1.3 և 1.8 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում՝ 127 դեպք, որը կազմում է ընդհանուր արձանագրված դեպքերի 62.8%-ը: Դեպքերի մեծ մասը արձանագրվել են քաղաքաբնակ բնակչության շրջանում՝ 88.6%, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

<u>Վարակային մոնոնուկլեոզ</u>

2019թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել է վարակային մոնոնուկլեոզի 60 դեպք, նախորդ տարի՝ 40 դեպք:



Գծապատկեր 5. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը

Ըստ գծապատկեր 5-ի՝ 2019թ. ապրիլ ամսվա ընթացքում արձանագրված մոնոնուկլեոզով պայմանավորված հիվանդության դեպքերը նախորդ ամսվա համեմատ աճել են 1.1 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.5 անգամ: Ապրիլ ամսվա ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 60 դեպք, որից 54-ը՝ արձանագրվել է 0-18 տարեկան երեխաների շրջանում:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2019թ. ապրիլ ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 771 դեպք, որից 191 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 580-ը՝ մարզերում: 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան աճել է:



Գծապատկեր 6. Աղիքային վարակների հիվանդացությունը 2018-2019թթ. հունվար– ապրիլ ամիսներին

Ըստ գծապատկեր 6-ի՝ 2019թ. մարտ ամսվա համեմատ (650 դեպք) աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.2 անգամ:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

2019թ. ապրիլի 16-26-ն ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզի Նավուր համայնքում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկում: Հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 80, որից 52-ը 0-18-ից տարեկան:

Համաճարակաբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ բռնկման առաջացման պատճառ է հանդիսացել Նավուր համայնքի խմելու ջրի ջրատարներից մեկի՝ Մեծ աղբյուր ջրատարի ջրի աղտոտումը, ինչը հաստատվել է իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքներով:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2019թ. ապրիլ ամսին հանրապետությունում արձանագրվել է կապույտ և հարկապույտ հազի 4 դեպք՝ չպատվաստած և թերի պատվաստված անձանց շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը ապրիլ ամսին կազմել է 88% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 90% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 96% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Վիրուսային հեպատիտներ

Հայաստանի Հանրապետությունում ապրիլ ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը աճել է 1.4 անգամ:

Սույն թվականի ապրիլ ամսին արձանագրվել է սուր վիրուսային հեպատիտի 7 դեպք: Վարակման հավանական պատճառները և ուղիներն են՝ սեռական ուղին, բժշկական և ոչ բժշկական ինվազիվ միջամտությունները:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում ապրիլ ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 39.9%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 60.1%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 45.1%-ն առաջացել է օրգանական լուծիչների, շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, ինչը պայմանավորված է շմոլ գազով թունավորումների սեզոնային բարձրացումով, 17.2%-ն՝ ալկոհոլային թունավորումներից՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 19%-ը՝ դեղամիջոցներով թունավորումներից՝ ինքնաբուժման և ծնողի անուշադրության հետևանքով, 7.5% թունավոր կենդանիների խայթոցից, 2.2%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 4.8%-ը՝ թունաքիմիկատների և 3.4%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2019թ. ապրիլ ամիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը աճել է 1.3 անգամ:

Մակաբուծային հիվանդություններ

Հանրապետությունում 2019թ. ապրիլին մալարիայի համաճարակային իրավիճակը հանգիստ էր, մալարիայի բերովի դեպքեր չեն արձանագրվել: 2019թ. ապրիլին ՀՀ-ում արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 2 դեպք՝ 1-ը՝ Լոռու մարզից (մահվան ելքով), մյուսը՝ ք. Երևանից և Լայմի հիվանդության 1 դեպք՝ Տավուշի մարզից (0-2 տարեկան տարիքային խումբ):

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում ապրիլ ամսին արձանագրվել է սննդային թունավորման 4 դեպք՝ 5 տուժածով, որից սնկից թունավորման 3 դեպք՝ 4 տուժածով, և բոտուլիզմի 1 դեպք՝ 1 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում սննդային թունավորման դեպքեր չեն արձանագրվել: Սննդային թունավորման դեպքերն արձանագրվել են Շիրակի, Արմավիրի և Լոռու մարզերում: Սնկից թունավորման պատճառ է հանդիսացել տուժածների կողմից հավաքած սունկը, իսկ բոտուլիզմի պատճառ է հանդիսացել տնային պայմաններում պահածոյացված սունկը: Սննդային

թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Կատարող՝ Աննա Աղաջանյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ